

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Բովանդակություն

Ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ եկամտի մասին հաշվետվություն.....	1
Ֆինանսական դրության մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	3
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն	5
2. Պատրաստման հիմունքներ.....	5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր.....	6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ	13
5. Հասույթ	13
6. Ինքնարժեք	13
7. Վարչական ծախսեր	13
8. Ֆինանսական եկամուտներ/(ծախսեր)	13
9. Շահութահարկի գծով ծախս.....	14
10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.....	14
11. Ժամկետային ավանդներ	14
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14
13. Բաժնետիրական կապիտալ	14
14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14
15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում.....	15

Համապարփակ եկամտի մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Հասույթ	5	864,732	747,830
Ինքնարժեք	6	(575,930)	(539,942)
Համախառն շահույթ		288,802	207,888
Վարչական ծախսեր	7	(106,837)	(108,434)
Գործառնական այլ եկամուտներ		3,835	629
Գործառնական այլ ծախսեր		(3,299)	(2,972)
Ֆինանսական եկամուտներ/(ծախսեր)	8	(29,658)	30,972
Շահույթ մինչև շահութահարկ		152,843	128,083
Շահութահարկի գծով ծախս	9	(37,579)	(27,080)
Տարվա զուտ շահույթ և համապարփակ եկամուտ		115,264	101,003

Ստորագրվել և հավանության է արժանացել թողարկման համար ղեկավարության կողմից:

Գլխավոր տնօրեն՝



Էրիկ Չայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝



Լիլիթ Լազարյան

28 մարտի 2022թ.



Ֆինանսական դրության մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		17,000	29,275
Հետաձգված հարկային ակտիվ		4,776	5,066
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		21,776	34,341
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	185,642	116,196
Կանխավճարներ		11,527	15,433
Ժամկետային ավանդներ	11	244,248	262,743
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	185,879	112,663
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		627,296	507,035
Ընդամենը ակտիվներ		649,072	541,376
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Բաժնետիրական կապիտալ	13	1,000	1,000
Կուտակված շահույթ		460,049	344,785
Ընդամենը սեփական կապիտալ		461,049	345,785
Ընթացիկ պարտավորություններ			
Շահութահարկի գծով պարտավորություններ		23,424	7,017
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	164,599	188,574
Ընդամենը պարտավորություններ		188,023	195,591
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		649,072	541,376

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Չայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝

Լիլիթ Լազարյան

28 մարտի 2022թ.



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Կուտակված շահույթ</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
2020թ. հունվարի 1		1,000	243,782	244,782
Հաշվետու տարվա շահույթ		-	101,003	101,003
2020թ. դեկտեմբերի 31		1,000	344,785	345,785
Հաշվետու տարվա շահույթ		-	115,264	115,264
2021թ. դեկտեմբերի 31	13	1,000	460,049	461,049

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Յայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝

Լիլիթ Լազարյան

28 մարտի 2022թ.



Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեություն			
Շահույթ մինչև շահութահարկը		152,854	128,083
Ճշգրտումներ մինչև շահութահարկը շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Հիմնական միջոցների և ոչ կյուրակական ակտիվների մաշվածություն		24,328	20,003
Տոկոսային եկամուտներ		(8,079)	(7,163)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)		37,725	(23,809)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը		206,828	117,114
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի ավելացում		(79,109)	194,817
Կանխավճարների նվազում/(ավելացում)		3,906	4,021
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի ավելացում/(նվազում)		(22,914)	(131,427)
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		108,711	184,525
Վճարված շահութահարկ		(20,883)	(42,542)
Չուտ դրամական հոսքեր ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունից		87,828	141,983
Ներդրումային գործունեություն			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(12,053)	(8,998)
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(2,250)	(177,203)
Ստացված տոկոսային եկամուտ		6,992	7,137
Չուտ դրամական հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունից		(7,311)	(179,064)
Ֆինանսական գործունեություն			
Վճարված շահաբաժիններ		-	-
Չուտ դրամական հոսքեր օգտագործված ֆինանսական գործունեությունից		-	-
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(7,301)	10,462
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ավելացում/(նվազում)		73,216	(26,619)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		112,663	139,282
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	12	185,879	112,663

Գլխավոր տնօրեն՝



Էրիկ Յայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝



Լիլիթ Լազարյան



28 մարտի 2022թ.

Ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

«Էրևսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 1999թ. հուլիսի 20-ին: 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 67 աշխատակից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, «Նորդ» բիզնես-կենտրոն, գրասենյակ 27:

Ընկերությունն աուդիտորական ծառայությունների մատուցման լիզենցիա է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին:

Հայկական և Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններին Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- ▶ Աուդիտորական ծառայություններ,
- ▶ Հարկային և իրավաբանական խորհրդատվություն,
- ▶ Խորհրդատվական ծառայություններ:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված ֆինանսական հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝ «ՖՀՄՍԿ»):

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Ընկերությունն առաջին անգամ կիրառել է ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք հրապարակվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել:

Տոկոսադրույքի չափորոշիչի բարեփոխում. փուլ 2՝ փոփոխություններ \$ՀՄՍ 9-ում, ՀՀՄՍ 39-ում, \$ՀՄՍ 7-ում, \$ՀՄՍ 4-ում, \$ՀՄՍ 16-ում (IBOR-ի բարեփոխման փուլ 2).

Փոփոխությունները տրամադրում են ժամանակավոր մեղմացումներ ֆինանսական հաշվառման համար, երբ միջբանկային առաջարկվող տոկոսադրույքը (IBOR) փոխարինվում է այլընտրանքային, գրեթե առանց ռիսկի տոկոսադրույքով (RFR): Փոփոխությունները ներառում են հետևյալ կիրառական մեղմացումները.

- ▶ Պայմանագրային փոփոխությունները կամ դրամական հոսքերում փոփոխությունները, որոնք ուղղակիորեն պահանջվում են բարեփոխումներով, կարելի է դիտարկել որպես լողացող տոկոսադրույքի փոփոխություն, որը համարժեք է շուկայական տոկոսադրույքի շարժին,
- ▶ Թույլատրում է IBOR-ի բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունները, հեջի հաշվառման և հեջավորման փաստաթղթերի համար՝ առանց հեջավորման հարաբերությունների դադարեցման,
- ▶ Տրամադրում է ժամանակավոր ազատում կազմակերպություններին առանձին ճանաչելի պահանջը բավարարելուց, երբ RFR գործիքը նախատեսված է որպես ռիսկի բաղադրիչի հեջ:

Փոփոխություններով նախատեսված գործնական արտոնությունները եական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ, 2021 թվականի հունիսի 30-ից հետո փոփոխություններ \$ՀՄՍ 16-ում

2020թ. մայիսի 28-ին ՀՀՄՍԽ-ն թողարկել է COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ՝ փոփոխություն \$ՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտում: Փոփոխությունները հնարավորություն են ընձեռնում վարձակալներին չկիրառել \$ՀՄՍ 16-ի վարձակալության վերափոխման հաշվառման ցուցումները՝ վարձավճարների՝ COVID-19 համավարակի ուղղակի հետևանքով առաջացած արտոնությունների համար: Որպես գործնական մոտեցում վարձակալը կարող է ընտրել չզևահատել, արդյոք COVID-19-ով պայմանավորված վարձակալից ստացված վարձավճարների արտոնությունները համարվում են վարձակալության վերափոխում: Վերոնշյալ ընտրությունը կատարող վարձակալը հաշվառում է COVID-19-ով պայմանավորված վարձավճարների փոփոխությունը այնպես, ինչպես կհաշվառեր փոփոխությունը, եթե այն չլիներ վարձակալության վերափոխում:

Փոփոխությունը նախատեսված էր կիրառել մինչև 2021թ. հունիսի 30-ը, բայց COVID-19 համավարակի ազդեցության շարունակականությամբ պայմանավորված, 2021թ. մարտի 31-ին ՀՀՄՍԽ-ն երկարաձգեց գործնական մոտեցման կիրառման ժամանակահատվածը մինչև 2022թ. հունիսի 30: Փոփոխությունը կիրառվում է 2021թ. ապրիլի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի ստացել COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ, սակայն մտադիր է կիրառել գործնական մոտեցումը կիրառելի դառնալու դեպքում՝ թույլատրելի ժամանակահատվածի ընթացքում:

Իրական արժեքի չափում

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝ այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Ընկերությունը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ընկերությունն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- ▶ 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ Նորից վերլուծելով դրանց դասակարգումը (եյնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումն իրականացվում է, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվները և պարտավորությունների դասակարգումը (առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր) կախված է վերջիններիս պայմանագրային դրամական հոսքերի բնույթից: Ընկերությունն սկզբնապես չափում է տվյալ ֆինանսական ակտիվներն ամորտիզացված արժեքով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և բանկերում պահվող մնացորդները, որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի:

Վարձակալություն

i. Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Ընկերությունը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի համար, որոնք համարվում են փոքրարժեք: Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում

- ▶ բնականոն գործունեության ընթացքում,
- ▶ պարտականությունների չկատարման դեպքում,
- ▶ կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ▶ ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- ▶ Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց Եական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- ▶ Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են կորուստներից ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն Եականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում (շարունակություն)

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ Էուրոյան, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունները հաստատված են թողարկման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ Էուրոյան, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Ընկերության գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ եկամտի մասին հաշվետվության «Վարչական ծախսեր» հոդվածում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայություն (տարի)	Դրույք (%)
Համակարգիչներ	1	100
Սարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական այլ եկամուտներում:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես Էմիսիոն եկամուտ:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Ընկերություն, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Արտարժույթի վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Ընկերության գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները սկզբնապես գրանցվում են գործառնական արժույթով, փոխարկվում են՝ կիրառելով գործարքի պահին գործող փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվության մեջ որպես ֆինանսական եկամուտներ/(վնասներ): Ոչ դրամային հողվածների համար, որոնք արտարժույթով չափվում են սկզբնական արժեքով, վերահաշվարկվում են գործարքի ամսաթվի փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հողվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

2021 և 2020 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 480.14 և 522.59 ՀՀ դրամ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել նոր ստանդարտները:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք Եական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 ստանդարտում փոփոխություններ: Պարտավորությունների դասակարգում՝ որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին, ՀՀՄՍ Խորհուրդը հաստատել է ՀՀՄՍ 1 ստանդարտի պարագրաֆներ 69-ից 76-ում փոփոխությունները՝ հստակեցնելով պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունը հստակեցնում է.

- ▶ Ի՞նչ է նշանակում վճարումը հետաձգելու իրավունք,
- ▶ Որ տարկետման իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- ▶ Որ դասակարգման վրա չի ազդում այն հավանականությունը, որ կազմակերպությունը կկիրառի իր տարկետման իրավունքը,
- ▶ Որ միայն այն դեպքում, եթե փոխարկելի պարտավորության մեջ ներկառուցված ածանցյալ գործիքն ինքնին բաժանային գործիք է, պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետադարձ: Չի ակնկալվում, որ փոփոխությունները Եական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

2020թ. ՀՀՄՍԽ-ն հրապարակել է Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում՝ «Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը», որի համաձայն ընկերություններին չի թույլատրվում Հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Ընկերությունը վաճառքից ստացված մուտքերն ու արտադրության ծախսերը պետք է ճանաչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այն պիտի կիրառվի հետադարձ այն հիմնական միջոցների նկատմամբ, որ պատրաստ են եղել հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, այն դեպքում, երբ կազմակերպությունը առաջին անգամ է կիրառում այս փաստաթուղթը:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները Եական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37-ի փոփոխություններ

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 37-ում՝ հստակեցնելու համար, թե որ ծախսերը պետք է ներառի կազմակերպությունը՝ գնահատելիս՝ արդյոք պայմանագիրը անբարենպաստ է:

Փոփոխությունները կիրառում են «ուղղակիորեն կապված ծախսերի մոտեցում»: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառում են ինչպես հավելյալ ծախսերը, այնպես էլ ծախսերի բաշխումն ուղղակիորեն կապված պայմանագրային գործունեության հետ: Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և բացառվում են, եթե դրանք ուղղակիորեն չեն բխում պայմանագրից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Չի ակնկալվում, որ փոփոխությունները Եական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապահովման համար «10 տոկոս» թեսթում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ Էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Չի ակնկալվում, որ փոփոխությունները Եական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում

2021թ. փետրվարին ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ, որտեղ ներկայացնում է հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում: Փոփոխությունները հստակեցնում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման միջև տարանջատումը: Դրանք նաև պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպություններն օգտագործում չափման մեթոդները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառելի են այդ ամսաթվին կամ այդ ժամանակաշրջանի սկսվելուց հետո իրականացող հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները Եական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ. փետրվարին ՀՀՄՍԽ-ն թողարկել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և «Եականության դատողությունների կատարում» ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում, որտեղ ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Եականության դատողություններ: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումներ՝ հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականությունների բացահայտման պահանջը փոխարինելով հաշվապահական հաշվառման «Եական» քաղաքականությունների բացահայտման պահանջով, և ավելացնելով ուղեցույց, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Եականության սկզբունքը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Զանի որ Գործնական ցուցումներ 2-ի փոփոխությունները հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության Եականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույցներ են, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը շարունակում է գնահատել փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները կապված են հասույթի՝ ժամանակի ընթացքում կամ ժամանակի որոշակի պահին ճանաչման հետ:

5. Հասույթ

Ընկերությունը հասույթ է ստանում հիմնականում հաճախորդներին մատուցած ծառայություններից:

6. Ինքնարժեք

Ինքնարժեքը ներառում է հետևյալ հոդվածները.

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
Աշխատավարձ	495,051	451,467
Վարձավճարներ	38,025	47,504
Գործուղման ծախսեր	13,833	6,747
Այլ	29,021	34,224
Ինքնարժեք	<u>575,930</u>	<u>539,942</u>

7. Վարչական ծախսեր

Վարչական ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
Աշխատավարձ	40,013	38,123
Աշխատակիցներին տրամադրված այլ օգուտներ	18,695	13,004
Հիմնական միջոցների մաշվածություն, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	15,402	20,003
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5,258	4,298
Սոցիալ-մշակութային միջոցառումներ	4,389	3,988
Այլ հարկերի գծով ծախսեր	3,964	7,348
Հեռահաղորդակցության ծախսեր	3,661	5,023
Սարքերինգային ծախսեր	2,554	2,883
Բարեգործական ծախսեր	543	4,205
Այլ վարչական ծախսեր	12,358	9,559
Վարչական ծախսեր	<u>106,837</u>	<u>108,434</u>

8. Ֆինանսական եկամուտներ/(ծախսեր)

Վարչական ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ/(ծախսեր)	(37,737)	23,809
Տոկոսային եկամուտ	8,079	7,163
Ֆինանսական եկամուտներ/(ծախսեր)	<u>(29,658)</u>	<u>30,972</u>

(հազար ՀՀ դրամ)

9. Շահութահարկի գծով ծախս

Ընկերությունը շահութահարկ է վճարում հայկական ընկերությունների համար գործող 18% դրույքաչափով:

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	37,290	25,760
Չեղարկված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	289	1,320
Շահութահարկի գծով ծախս	<u><u>37,579</u></u>	<u><u>27,080</u></u>

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը ներկայացնում են Ընկերության մատուցած ծառայությունների և կատարված աշխատանքների գծով դեբիտորական պարտքեր:

11. Ժամկետային ավանդներ

Ժամկետային ավանդները ներառում են Ամերիա բանկում Ընկերության ներդրված դոլարային ավանդները: Ժամկետային ավանդները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեն մինչև 270 օր ժամկետայնություն և ներդրված են 2.2%-3.5% տարեկան տոկոսադրույքով:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	<u>2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Բանկային հաշիվների մնացորդներ	185,846	112,454
Կանխիկը դրամարկղում	33	209
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	<u><u>185,879</u></u>	<u><u>112,663</u></u>

13. Բաժնետիրական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 1,000 հազար ՀՀ դրամ (2020թ.՝ 1,000 հազար ՀՀ դրամ):

Ընկերության կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 100 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքներով (2020թ.՝ 100 սովորական բաժնետոմսեր):

2020 և 2021 թվականների ընթացքում չահաբաժին չի վճարվել:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ներառում են հետևյալ հոդվածները.

	<u>2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Ստացված կանխավճարներ	113,332	134,810
Արձակուրդայինի պահուստ	23,401	25,002
Այլ կրեդիտորական պարտքեր	27,866	28,762
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	<u><u>164,599</u></u>	<u><u>188,574</u></u>

(հազար ՀՀ դրամ)

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում

Ներածություն

Ընկերության գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Ընկերության ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Ընկերության ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Ընկերության ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Ընկերության ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Ընկերության ռազմավարական պլանավորման մի մասը: Ընկերության ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, Ընկերության կողմից ստանձնած ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի վերահսկողություն: Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ:

(հազար ՀՀ դրամ)

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջկած պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով:

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	27,866	-	-	-	-	27,866
Ընդամենը չգեղջկած ֆինանսական պարտավորություններ	27,866	-	-	-	-	27,866

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28,762	-	-	-	-	28,762
Ընդամենը չգեղջկած ֆինանսական պարտավորություններ	28,762	-	-	-	-	28,762

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի էական արժութային ռիսկեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

(հազար ՀՀ դրամ)

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում (շարունակություն)**Արտարժույթի ռիսկ (շարունակություն)**

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2021 թ.	Չուտ շահույթի զգայունություն 2021 թ.
ԱՄՆ Դոլար	5.0%	5,299
Եվրո	8.5%	68

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2021 թ.	Չուտ շահույթի զգայունություն 2021 թ.
ԱՄՆ Դոլար	5.0%	(5,299)
Եվրո	8.5%	(68)

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2020թ.	Չուտ շահույթի զգայունություն 2020 թ.
ԱՄՆ Դոլար	5.0%	4,098
Եվրո	16.0%	2,118

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2020 թ.	Չուտ շահույթի զգայունություն 2020 թ.
ԱՄՆ Դոլար	5.0%	(4,098)
Եվրո	16.0%	(2,118)

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին: